

Medicare-ի նոր քարտ, միևնույն խաբեբաներ

Medicare-ը նոր, ավելի անվտանգ Medicare-ի քարտեր է ուղարկում՝ Medicare ունեցող յուրաքանչյուր անձի համար յուրահատուկ Medicare-ի համարով: Medicare-ը հրաժարվում է հին քարտից, քանզի հին Medicare-ի համարը հիմնված էր անձի Սոցիալական ապահովության համարի վրա: Խաբեբաներն երբեմն օգտագործում են Սոցիալական ապահովության համարները որևէ մեկի ինքնությունը գողանալու, նոր վարկային քարտեր բացելու կամ անգամ մեկ ուրիշի անունով վարկեր ստանալու համար:

Նոր Medicare-ի քարտով՝ Ձեր նպաստները չեն փոփոխվի, և այն Ձեզ անվճար կուղարկվի, այնպես որ, ոչինչ պետք չէ անել այն ստանալու համար:

Խաբեբաները հույս ունեն, որ Դուք տեղեկացված չեք լինի Medicare-ի քարտերի փոփոխության մասին, և նրանք կարող են փորձել օգտվել հնարավորությունից՝ Ձեր անձնական տեղեկությունները ստանալու համար: Պայքարեք դրա դեմ՝ հետևելով այս խորհուրդներին՝

- **Մի վճարեք Ձեր նոր Medicare-ի քարտի համար:** Այն անվճար է: Եթե որևէ մեկը զանգահարի և ասի, որ Դուք պետք է վճարեք, դա խաբեբայություն է: Երբեք մի տվեք Ձեր Սոցիալական ապահովության համարը, բանկային հաշվի համարը կամ կանխիկ դրամ մի ուղարկեք մեկին, ով ասի, որ այն անհրաժեշտ է Ձեր նոր Medicare-ի քարտը ստանալու համար:
- **Մի տվեք Ձեր Medicare-ի համարը մարդկանց, ում չեք ճանաչում կամ անձամբ չեք դիմել:** Որոշ խաբեբաներ զանգահարում են՝ ներկայանալով որպես Medicare-ի աշխատակիցներ, սակայն Medicare-ը, կամ Medicare-ը ներկայացնող անձինք, երբեք չեն հարցնի Ձեր անձնական տեղեկությունները Ձեզ նոր Medicare-ի քարտ ուղարկելու համար: Ձեր Medicare-ի համարը տվեք միայն բժիշկներին կամ համայնքի վստահելի ներկայացուցիչներին, ովքեր աշխատում են Medicare-ի հետ, ինչպիսին է Ձեր նահանգային Առողջապահության ապահովագրության աջակցության ծրագիրը (State Health Insurance Assistance Program, SHIP): Ասացեք «ոչ, շնորհակալություն» որևէ անձանոթ մեկին, ով առաջարկում է լրացնել դիմումներ կամ ձևաթղթեր, որոնք Ձեզանից պահանջում են անձնական տեղեկությունների տրամադրում, ինչպիսին է Ձեր Սոցիալական ապահովության համարը:
- **Անձանոթ անձանց մի տվեք Ձեր բանկային հաշվի համարը :** Եթե որևէ մեկն առաջարկում է զեղչերի փոխհատուցում կամ բոնուս փոխանցել Ձեր բանկային հաշվին, քանզի Դուք նոր Medicare-ի քարտ եք ստացել, դա խաբեբայություն է:

- **Թույլ մի տվեք, որպեսզի որևէ մեկը Ձեզ խաբի՝ համոզելով, որ Ձեր Medicare-ի նպաստները կչեղարկվեն, եթե Դուք իրենց չտաք Ձեր Medicare-ի համարը:** Եթե որևէ մեկը վախեցնում է Ձեզ, որ Ձեր առողջապահության նպաստները կչեղարկվեն, եթե Դուք չտրամադրեք Ձեր Medicare-ի համարը, հեռախոսն անմիջապես վայր դրեք: Եթե Դուք կասկածելի հեռախոսազանգ ստանաք, զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227; TTY: 1-877-486-2048) կամ այցելեք Մեծահասակների Medicare-ի պարեկի (Senior Medicare Patrol) կայքը՝ smpresource.org հասցեով:
- **Ոչնչացրեք Ձեր հին Medicare-ի քարտը:** Երբ ստանաք Ձեր նոր Medicare-ի քարտը, ոչնչացրեք Ձեր հին Medicare-ի քարտը և անմիջապես սկսեք օգտագործել նորը: Հին քարտը պարզապես դեմ մի նետեք, այն մանր կտորների կտրեք: Այցելեք YouTube-ի CMSHHSgov ավիքը՝ տեսնելու համար մեր «Ոչնչացրեք Ձեր Medicare-ի քարտը» կոչվող տեսանյութը:

Միլիոնավոր ամերիկացիներին նոր Medicare-ի քարտեր ուղարկելը որոշ ժամանակ կպահանջի: Ձեր և Ձեր ընկերոջ կամ հարևանի քարտերը կարող են տարբեր ժամանակներ ժամանել: Տեղեկացեք, թե երբ նոր քարտեր կսկսեն ուղարկել Ձեր տարածքում՝ սայցելելով Medicare.gov/NewCard կայքը և գրանցվելով Medicare-ի էլեկտրոնային ծանուցումների համար:

Medicare-ի խարդախության դեմ պայքարելու հարցում Ձեր օգնության մասին ավելին իմանալու համար այցելեք Medicare.gov/fraud կայքը: